Հավելված

«Հայաստանի Հանրապետության և
Ռուսաստանի Դաշնության միջև
մինչև 2010 թվականի երկարաժամկետ տնտեսական
համագործակցության մասին» Պայմանագրին կից

# Ծ Ր Ա Գ Ի Ր
## Մինչև 2010 թվականի Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև (այսուհետ՝ Կողմեր) տնտեսական հարաբերությունների զարգացումը պայմանավորված է պատմականորեն ձևավորված սերտ և բազմակողմ արտադրական և գիտատեխնիկական կապերով, համատեղ ռազմավարական շահերով:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև մինչև 2010 թվականի երկարաժամկետ տնտեսական համագործակցության Ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր) մշակված է՝ ելնելով 1997 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին» Պայմանագրի և 2000 թվականի սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 21-րդ դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» Հռչակագրի դրույթներից:

### 1. Ծրագրի հիմնական նպատակները և խնդիրները

Ծրագիրը մշակված է Կողմերի տնտեսավարող սուբյեկտների փոխգործողության հաստատման և խորացման նպատակով, դրա հիման վրա Կողմերի միջև առևտրատնտեսական հարաբերություններում նկատելի առաջընթացի և ապրանքաշրջանառության աճի ապահովման համար:

Ծրագրում նախանշված նպատակները իրագործվում են հետևյալ ճանապարհներով.

երկու երկրների տնտեսության կառուցվածքային վերակառուցման նկատմամբ հայեցակարգային մոտեցումների մերձեցում,

Կողմերի տնտեսավարող սուբյեկտների գործունեության հավասար հնարավորությունների և երաշխիքների ստեղծման համար ինստիտուցիոնալ վերափոխումների համակարգում,

համագործակցության հաստատում անօրինական ճանապարհով ստացված եկամուտների լեգալիզացմանը (լվացման) հակազդելու բնագավառում,

միջպետական և տարածաշրջանային համագործակցության զարգացման առաջնային ուղղությունների հստակեցում, այդ ուղղություններով դրանց պետական աջակցության համակարգի ստեղծում,

նպատակային միջպետական նախագծերի և տնտեսական համագործակցության ծրագրերի, ինչպես նաև դրանց իրականացման համար ինտեգրացված ենթակառուցվածքների ձևավորում,

ձեռնարկությունների արտադրական կոոպերացիայի հետագա զարգացում,

արտաքին առևտրի քաղաքականության և երրորդ երկրների շուկաներում արտաքին առևտրային գործունեության համակարգման մեխանիզմի ստեղծում,

չվճարումների և փոխադարձ պարտքերի մարման խնդրի լուծում, առևտրավճարային հարաբերությունների ներդաշնակեցման ապահովում,

մաքսային գործունեության տարբեր ոլորտներում մաքսային գերատեսչությունների համագործակցության հստակ ձևերի սահմանում,

բարեխիղճ մրցակցության չափանիշների համաձայնեցում, անբարեխիղճ գործողությունների դադարեցման և վնասի փոխհատուցման պահանջների ներկայացման կարգի սահմանում,

համագործակցություն ֆոնդային շուկաների և ապահովագրական ծառայությունների շուկայի զարգացման բնագավառում:

## 2. Տնտեսական և ֆինանսական համագործակցության զարգացում

Ծրագրով նախատեսվում է առաջնահերթ միջոցների շարքում իրականացնել նորմատիվաիրավական դաշտի ներդաշնակեցում և միասնականացում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերում Կողմերի տնտեսավարող սուբյեկտների փոխգործողության համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով:

Հիմնական ուշադրություն է դարձվելու օրենսդրության ներդաշնակեցմանը այն ոլորտներում, որոնք կանոնակարգում են վարկային կազմակերպությունների գործունեությունը, ֆինանսական ինստիտուտների համագործակցության զարգացումը, համատեղ

ձեռնարկությունների ստեղծումը, գնային քաղաքականության կանոնակարգումը, փոխադարձ ներդրումների և արտադրական կոոպերացիայի պաշտպանության պայմանները, առևտրային վեճերի լուծման միասնական կանոնների ձևավորումը, սպառողական ապրանքների և ծառայությունների շուկայի իրավիճակի համատեղ տեղեկատվական համակարգի ստեղծումը:

Նախատեսվում է իրականացնել միջոցառումներ արտաքին առևտրի մաքսային վիճակագրության ոլորտում տեղեկատվական փոխգործունեության ընդլայնման և մեթոդաբանության համաձայնեցման, մաքսային ընթացակարգերի կատարելագործման, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման, արտադրանքների և ծառայությունների նորմատիվ պահանջներին համապատասխանության հաստատման նպատակով:

Նախատեսվում է առանձնացնել համագործակցության առաջնային ուղղությունները գործունեության առանձին ոլորտներում, այդ թվում՝ փոխշահավետ միջճյուղային համագործակցություն վառելիքաէներգետիկ և ռազմաարդյունաբերական համալիրների, գունավոր մետալուրգիայի, շինարարության, կապի և տեղեկատվության, թեթև արդյունաբերության բնագավառներում:

## 3. Ծրագրի իրագործման ղեկավարումը

Ծրագրի իրագործման նպատակով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական հարցերով միջկառավարական հանձնաժողովը, որը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 1995-1996թթ. առևտրատնտեսական համագործակցության մասին» 1996 թվականի մայիսի 28-ի Համաձայնագրի 7-րդ հոդվածին համապատասխան (այսուհետ՝ Միջկառավարական հանձնաժողով), կհաստատի Ծրագրին կից միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառումներ):

Միջոցառումները պարունակում են առաջարկների մշակումներ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության երկարաժամկետ համագործակցության հեռանկարային նախագծերի և հարցերի, այդ թվում՝ Կողմերի տնտեսավարող սուբյեկտների փոխգործողության բնագավառում:

Միջկառավարական հանձնաժողովը իր նիստերի ընթացքում իրականացնում է Ծրագրի և Միջոցառումների կատարման ուսումնասիրություն:

Միջկառավարական հանձնաժողովը.

համակարգում է Ծրագիրը և Միջոցառումները իրականացնող պետական մարմինների գործունեությունը, հսկում է միջոցառումների կատարումը,

անհրաժեշտության դեպքում Ծրագրում և Միջոցառումներում առաջարկում է համապատասխան փոփոխություններ կատարել,

կազմակերպում է Ծրագրի և Միջոցառումների իրականացման հետ կապված միջկառավարական համաձայնագրերի նախագծերի նախապատրաստումը, իրականացնում է հսկողություն փոխադարձ համագործակցության հեռանկարային ուղղություններում համատեղ նախագծերի և ծրագրերի իրագործման նկատմամբ:

Ծրագրով և Միջոցառումներով նախանշված համագործակցության հարցերի և նախագծերի մշակման համար Միջկառավարական հանձնաժողովը կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր բնույթի աշխատանքային խմբեր:

Աշխատանքային խմբերը Ծրագրի և Միջոցառումների իրագործումը իրականացնում են հետևյալ ճանապարհներով.

Ծրագրի և Միջոցառումների համապատասխան բաժինների իրագործման համակարգում և մոնիտորինգ՝ աշխատանքային խմբերի ազգային մասերի մակարդակով,

Ծրագրի և Միջոցառումների բաժինների կատարման արդյունքների հիման վրա համաձայնեցված առաջարկների ձևավորում՝ անհրաժեշտության դեպքում միջկառավարական մակարդակով քննարկելու և որոշում ընդունելու համար,

Ծրագրի և Միջոցառումների կատարման իրագործման և համակարգման հարցերին առնչվող միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերի և համաձայնագրերի նախագծերի նախապատրաստման կազմակերպում,

Միջկառավարական հանձնաժողովի նիստի ժամանակ համագործակցության իրավիճակի մասին ամենամյա զեկույցների նախապատրաստում՝ դրա հետագա զարգացման և կատարելագործման առաջարկներով:

Ծրագրի և Միջոցառումների իրականացման հետ կապված ծախսերի ֆինանսավորումը կատարվում է Կողմերի շահագրգիռ տնտեսավարող սուբյեկտների հաշվին: